

Ժողովուրդ

165
(2645)

17 նոյեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 136



2022 թվականի մարտի 2-ին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ԶԳ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական սխալ հայտարարությունն է արել ու մանիպուլացրել հասարակությանը: Մասնավորապես՝ այդ օրը նա հայտարարեց, թե՛ Մադրիդյան սկզբունքների առաջին իսկ կետով նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի յոթ շրջանների հանձնում Ադրբեջանին: Նա այդպիսի հայտարարություն արեց՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Զոհիսիմե Ստամբուլյանի հարցին: «Եթե Սանասար եւ ոչ Կուբաթի, ապա ձեր լիդերներն ինչո՞ւ էին 20 տարի բանակցել այդ տարածքները Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ: Ձեր ընդունած Մադրիդյան սկզբունքներում գրվել է՝ կետ առաջին՝ յոթ շրջանները վերադարձվում են Ադրբեջանին», - ասել էր նա: Իսկ ո՞րն է իրականությունը: 2007 թվականի նոյեմբերին ներկայացված Մադրիդյան սկզբունքների առաջին կետը վերաբերում է ոչ թե յոթ շրջանները հանձնելուն, ինչպես պնդում է Նիկոլ Փաշինյանը, այլ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի վերջնական իրավական կարգավիճակը որոշող պլեբիսցիտին: «ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռնում է կամքի ազատ եւ իրական արտահայտում», - նշված էր փաստաթղթում: Տարածքների վերադարձի մասին խոսվում է երրորդ կետում, ըստ որի՝ նախկին ԼՂԻՄ-ին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվելու են ադրբեջանական վերահսկողության տակ՝ փաստաթղթում նշված կարգով: Ստացվում է՝ ԶԳ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր հայտարարություններով հերթական անգամ խաբել ու մանիպուլացրել է ԶԳ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:


Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Զարությունյանն առանց իր օգնականի որեւէ հանդիպման չի գնում: Սա ոչ թե «Ժողովուրդ» օրաթերթի վախճանագրից արդյունք է հայտնում, այլ Զարությունյանի հրապարակած լուսանկարներն ու տեսալուսանկարներն են բացեցրել խոսում այդ մասին: Երեկ, օրինակ, վարչապետի աշխատակազմի ղեկավարը Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի անդամների հետ հանդիպման նորից իր օգնական Զովհաննես Պողոսյանի հետ է գնացել: Վերջինս ոչ միայն ուղեկցում է Զարությունյանին, այլ նաեւ պարտադիր կերպով մասնակցում է բոլոր հանդիպումներին ու, որպես խիստ կարեւոր անձ ու դերակատար, նստում վերադասի կողքին: Իհարկե, անհասկանալի է, թե այդ երբևէ կամ պաշտոնական ինչ արարողակարգով է Զարությունյանի օգնականը պարտադիր մասնակցում բոլոր հանդիպումներին, բայց կառավարական կաբինետի մեր աղբյուրները փոխանցում են, որ նույն կարգավիճակով Պողոսյանը նաեւ արտասահմանյան գործուղումների ժամանակ տեղի ունեցող հանդիպումներին է ներկա գտնվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Զովհաննես Պողոսյանը Արայիկ Զարությունյանի վարորդն է եղել վերջինիս՝ ԿԳՄՍ նախարար եղած ժամանակ: Առավել քան տարակուսելի է, թե վարորդից օգնական դարձած Պողոսյանը ինչ հարցերում է կարողանալու օգնել Զարությունյանին, եւ որն է պատճառը, որ նա Զարությունյանի հետ ու նրա կողքին պարտադիր պետք է ներկա լինի բոլոր հանդիպումների, այցերի, գործուղումների ժամանակ:



Ի շնորհ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության ընտրակեղծիքների թեման դեռ շարունակում է եռալ: Թեմա կուսակցության ներսում գործած ընտրակեղծարարների խումբը հանդես է եկել Նիկոլ Փաշինյանի անունից եւ կոնկրետ ցուցակ շրջանառել, թե ում պետք է քվեարկել՝ որպես վարչության անդամ, ամեն դեպքում, նաեւ այլ խոսակցություն է եղել վերջին նիստի ժամանակ: «Ժողովուրդ» օրաթերթը իր իրազեկ աղբյուրներից տեղեկացավ, որ ՔՊ վերջին նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը նախատել է թեմակիցներին՝ ասելով, որ անընդունելի է ոչնչի առջեւ չկանգնելով անել ամեն ինչ ՔՊ վարչության կազմում հայտնվելու համար: Ավելին՝ հայտնել է, թե արդեն ուժայիններին հանձնարարել է վարչության ընտրությունների սրահի բոլոր տեսախցիկներն ազդարարել՝ պարզելու, թե ով կամ ովքեր են եղել կեղծարարները: Երեկ տեղեկացանք, որ տեսախցիկներն արդեն ազդարարվել են, եւ արդեն պարզվել է մի խիստ ուշագրավ հանգամանք: Պարզվում է՝ դուռը այն սրահի, որտեղ պետք է պահվեին քվեատուփն ու ցուցակները, պետք է փակ լինեք, ավելին՝ կապարակնելով, սակայն ոչ դուռը, ոչ արկը, ըստ տեղեկությունների, կապարակնելով չեն եղել: Ստացվում է՝ ընտրակեղծիքներ կատարելու ճանապարհը բաց է եղել: Հաշվիչ հանձնաժողովի անդամները պետք է պատասխան տան, թե ում հրահանգով կամ ինչ նպատակով են թույլ տվել այդ կոպիտ խախտումը: Այլ կերպ ասած, ընտրակեղծիքների մեխանիզմը սկսել է բացահայտվել. հետաքրքիր է՝ դրա համար Նիկոլ Փաշինյանը կատարած կեղծարարների խմբակին արդյոք, թե տիրապետող Արսեն Թորոսյանին, որը կասկածվում է ՔՊ կողմից բացահայտումներ անելու համար:



Հարգարդատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Գրիգոր Մինասյանից հետաքրքրվեցինք, թե նա ինչպես է աշխատում քաղաքական այս իշխանության հետ, երբ իր հայրիկին քաղաքական իշխանությունների հրահանգով քրեական հետապնդման ենթարկեցին, մեղադրանք առաջարկեցին, եւ դեռ ավելին՝ հետախուզում է հայտարարվել նրա նկատմամբ: Ի պատասխան մեր այս հարցադրմանը՝ Գրիգոր Մինասյանն ասաց, որ անձնական այդպիսի հարցերի չի պատասխանում: Հիշեցնենք, որ ԶԳ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ Արա Մինասյանին մեղադրանք է առաջարկվել վերջինս իր կարգադրիչ լիազորությունները բժշկական կենտրոնի շահերին հակառակ է օգտագործել՝ Հայաստանի Հանրապետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 908 միլիոն դրամից ավելի գույքային վնաս: Առանձնապես խոշոր չափի՝ 45 միլիոն 402 հազար 392 դրամ, 27 միլիոն դրամից ավելի վատնում կատարելու եւս երկու դրվագ կա, ինչպես նաեւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթերի կեղծիքի կատարում: Նկատի ունենալով, որ Մինասյանը թաքնվում է քննությունից, եւ պարզ չէ գտնվելու վայրը, նրա նկատմամբ հայտարարվել էր հետախուզում: 2019 թվականին առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը հրապարակային «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի նախկին տնօրեն Արա Մինասյանի մասին մեղադրանքներ էր հնչեցրել, ինչի առթիվ Արա Մինասյանի փաստաբանը դատի էր տվել առողջապահության նախկին նախարար, ներկայումս ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանին: Մինասյանի փաստաբանը դատարանում պնդել էր, որ նախարար Թորոսյանն իր ֆեյսբուքյան էջի ուղիղ եթերում Մինասյանի հասցեին զրպարտիչ հայտարարություններ է արել: Դատարանը բավարարել էր այս հայցն ու պարտավորեցրել նախարարին հրապարակավ ներողություն խնդրել Մինասյանից:



ԿԱՐԾԻՔ

«ՊԱՐԱՆՔՎԱԾ ԲԱՅԼ ԷՐ». ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Խորհրդարանական «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունները 2022-ի զարանանից փողոցում ընթացող հաղափական դաշտից հետո երեկ հոկտեմբերի 15-ին, նորից Ազգային ժողովի նիստերի դահլիճ են վերադարձել ու հայտարարել, որ Հայաստանի ու Արցախի համար օրհասական այս դահլիճը իրենց էլեկտրոսի դահլիճով ու դրոմամբ որոշել են իրենց գործունեությունն օտարադրում ցարունակել:



«Միացյալ Հայաստան» կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանի գնահատմամբ՝ ընդդիմադիրների՝ խորհրդարանի գնալը պահանջված քայլ էր: ArmLur.am-ի հետ զրույցում Թարվերդյանը նշում է, որ ինքը բազմիցս է հայտնել՝ եթե ժողովուրդը պատգամավորներ է ընտրել, ապա ժողովրդի կողմից ընտրվածները պարտավոր են իրենց գործը անել:

«Եթե իշխող կուսակցության խորհրդարանական խմբակցությունը՝ «Քաղաքացիական պայմանագիրը», վատ նախագիծ է առաջ բերում, ու քանի որ ճնշող մեծամասնություն է, հետևաբար, դա կարողանում է անցկացնել, ապա ընդդիմադիրները կոնկրետ օրինագծերի վերաբերյալ պարտավոր են իրենց կարծիքը հայտնել: Հանրությունը պետք է հասկանա՝ նախագիծն ի՞նչ է ենթադրում, ինչի՞ մասին է ու, ամենակարևորը, ի՞նչ թերություններ ունի: Շատ դեպքերում ընդդիմության առաջարկների կամ քննադատության հետ իշխանությունը հաշվի է նստում, քննարկում է դրանք ու որոշակի փոփոխություններ է մտցնում օրենսդրական փաթեթներում:

«Այսինքն՝ խորհրդարանական ընդդիմությունը միայն ԱԺ աշխատանքներով զբաղվի»:

«Ոչ, նրանց որ չի պարտադրում խորհրդարանով սահմանափակվել ու միայն այդտեղի աշխատանքը կատարել: Եթե նրանք ցանկանում են փողոցի պայքար մղել, իրենց գործունեությունն այդպես իրականացնել, ապա՝ խնդրում: Բայց, համենայնդեպս, խորհրդարանական աշխատանքը նշանակում է մասնակցել Ազգային ժողովի՝ իրեն վարապահված աշխատանքներին:

«Պատիվ ունեմ» դաշինքը, օրինակ, հայտարարել է, որ կառավարության հարցուպատասխանին չի մասնակցելու: Դա նշանակում է, որ կամ հարցեր չունի, կամ իշխանությանը հարցեր տալ չի ցանկանում: Բայց Ազգային ժողովի աշխատանքների, օրենսդրական նախաձեռնությունների քննարկումների մասին պարտավոր են իրենց կարծիքն ասել, անգամ եթե հայտարարում են, թե՛ կարծիք չունենք, սա ինքնին արդեն կարծիք է:

«ԱԺ նսիտերին ջնամակցելն ու խորհրդարան չգնալը, ասում են, քաղաքական բոլորտ է, ինչն ամբողջությամբ տեղավորվում է խորհրդարանական գործունեության տրամաբանության մեջ: «Այո, համաձայն եմ՝ քաղաքական բոլորտ է, բայց ժողովուրդը, որ ընտրել ու խորհրդարան է գործուղել, ի՞նչ կապ ունի այդ բոլորտի հետ: Նրանք փողոցում կարող են իրենց բոլորտն արտահայտել, բայց ընտրողների քվեն պետք է ներկայացնեն խորհրդարանում: Եվ եթե շարունակեն խորհրդարանում իրենց աշխատանքները չկատարել, ապա դա պատճառ կլինի, որ հաջորդ ընտրություններին ժողովուրդը նրանց պարզապես չի ընտրի: Զրույցը ՍԵՎԱԿ ՎԱՐՈՂՈՍՅԱՆԸ

ԱՐԶԱԳԱՆՔ

ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՉԻ ԿԱՐՈՂ

ՀՀԿ-ական Արմեն Ասոսյանին արգելել են լինել երկիրը: Նրան «Չվարթինգ» օդանավակայանում սեղեկացրել են, որ երկրից դուրս գալ չի կարող, քանի որ «ինչ-որ գործով մեղադրյալ է»:

Աշոտյանի փոխանցմամբ՝ մինչև այս պահին իրեն որեւէ մեղադրանք չի առաջարկվել:

ArmLur.am-ը կապ հաստատեց Աշոտյանի փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ մեղադրանքի մասին է խոսքը: Մեզ հետ զրույցում Աթանեսյանն ասաց, որ այս պահին անգամ պարզ էլ չէ, թե ինչ քրեական գործի մասին է խոսքը:

Նշենք, որ ավելի վաղ Աշոտյանը տեղեկացրել էր, որ մեկնում է արտերկիր՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության քաղաքական համաժողովին մասնակցելու:

Ավելի ուշ Արմեն Աշոտյանը այս թեմայով հանդես եկավ ասուլիսով:

«Երկրից ինձ դուրս թողնելու արգելքի հրամանը տվել է անձամբ Նիկոլ Փաշինյանը»:

Նա հիշեցրեց, որ մեկնում էր Լիսաբոն՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության քաղաքական համաժողովին, որտեղ պետք է հանդիպումներ անցկացնել:

թյան քաղաքական համաժողովին, որտեղ պետք է հանդիպումներ անցկացնել:

Աշոտյանը պարզաբանեց, որ իր ելույթների 99 տոկոսը նախատեսված էին Ղարաբաղյան խնդրի եւ տարածաշրջանում տիրող իրավիճակի թեմայով, եւ միայն 1 տոկոսը՝ Հայաստանում ստեղծված հակաժողովրդավարական իրավիճակի թեմայով: «Մենք մեր կուսակցական կապերը միշտ օգտագործել ենք ի շահ պետության», - հավելեց ընդդիմադիրը: Նա դա անվանեց Փաշինյանի կողմից աննախադեպ արքունի եւ «բեսարեղել»:

Մենք հայց ենք պատրաստում պաշտոնական լիազորությունների չհարաձգման կապակցությամբ համապատասխան մարմինների ներկայացուցիչներին նկատմամբ քրեական գործի հարուցման մասին: Նոյեմբերի 16-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին ասաց «Հայաստանի Հանրապետական» կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանը:

Նա իշխանություններին կոչ արեց պատրաստվել դատին: Աշոտյանը հիշեցրեց, որ առավոտյան «Ջվարթինգ» օդանավակայանի անձնագրային ստուգման փուլում նրան արգելել են լքել Հայաստանը այն հիմքով, թե նա մեղադրյալ է ինչ-որ գործով:

«Հեռախոսահամարը, որն ինձ տվել էին եւ որով ես պետք է գնալ, քննչական կոմիտեի քննիչին է պատկանում, որը քննում է քաղաքական սկսնդալի վերաձված բժշկական համալսարանի գործը», - նշեց նա:

ՀՀԿ փոխնախագահն ասաց, որ Հայաստանի ԱԾ աշխատակիցներն իրենց կոռեկտ են պահել՝ օրենքի շրջանակում: Նրանք վստահություն են հայտնել, որ դա քննչական կոմիտե-գլխավոր դատախազություն դուետի աշխատանքն է:

«Ես մինչև հիմա ծանուցում չեմ ստացել, որ որեւէ գործով որպես մեղադրյալ եմ ներգրավված: Իմ հանդեպ կիրառվել է երկրից չհեռանալու մասին ստորագրություն, բայց ես չեմ ստացել նաեւ այդ ծանուցումը: Այսինքն՝ խափանման միջոցը նույնպես անօրինական է: Եթե ես խոշոր հանցագործ լինեի, ուրեմն պետք է անձնագրային ստուգման ժամանակ ձերբակալվեի: Սա նույնպես տեղի չունեցավ», - ընդգծեց Աշոտյանը:

Ս. ՎԱՐՈՂՈՍՅԱՆ



ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՉԻ ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ

Արցախի խորհրդարանի ընդդիմադիր պատգամավոր Ռավիթ Գալստյանն իր կողմից առաջարկած հանձնաժողով ստեղծելու նախաձեռնության, ինչպես նաեւ՝ Սամվել Բաբայանի կուսակցության՝ քննիչ հանձնաժողով ձեւավորելու նախաձեռնության հարցը սեպտեմբերին քննարկելու վերաբերյալ հայտարարության մասին վերջերս՝ մոտ 20 օր առաջ, Արցախի ԱԺ-ում էր ինչեցրել: Նրա հայտարարությունից հետո սակայն առ այսօր Բաբայանի կուսակցության կողմից որեւէ արձագանք դարձյալ չկա՝ ի վերջո քաղաքական կամք դրսևորելու են միանալու այդ նախաձեռնությանը, թե՛ ոչ:

Ու թեւէ Բաբայանն ու կուսակիցները հերքում են, թե նա Արցախի ներդրումների հիմնադրամից գումար չի ստացել, այնուամենայնիվ, Արցախի քաղաքական շրջանակները շարունակում են պնդել, թե «Միասնական հայրենիք» կուսակցության առաջնորդն այդ գումարը՝ 100 մլն դրամը, միջնորդավորված է ստացել:

Թեւէ մեզ որեւէ կերպ չի հաջողվում կապ հաստատել Բաբայանի հետ ու այս՝ թնջուկի նմանված պատմության հարցերն անձամբ իրեն ուղղել, բայց Ստեփանակերտից պնդում են նաեւ, թե վերոնշյալ հանձնաժողովը չի ձեւավորվում հենց այդ՝ 100 մլն դրամի պատճառով: Այսինքն՝ պետությունը առանց տոկոսի 100 մլն դրամ է տվել Բաբայանին, որպեսզի նրա կուսակցությունից եւ որեւէ մեկը հանկարծուհանկարծ չմիանա ընդդիմադիր պատգամավորի նախաձեռնությանը, ու այդ հանձնաժողովն այդպես էլ չձեւավորվի:

ՈՒՄԻՑ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

Պետական պահպանության ծառայության աշխատակիցները, որոնք ապահովում են Հայաստանի Հանրապետության վարչապետի անվտանգությունը, արդեն նաեւ Ազգային ժողովի նիստերի դահլիճում են հսկում Նիկոլ Փաշինյանի անդորրը: ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, որ պետական պահպանության ծառայության աշխատակիցները մուտք են գործել խորհրդարանի դահլիճ ու նստել ընդդիմադիր պատգամավորների գլխավերելու: Խորհրդարանի աշխատանքները երկար տարիներ լուսաբանող լրագրողներս երբեւէ նման բանի ականտեսը չենք եղել: Եվ այժմ հետաքրքիր է, թե ինչի՞ց կամ ումի՞ց է վախենում Նիկոլ Փաշինյանը, որ պատգամավորներին ոտքից գլուխ ստուգելուց, ապա նոր դահլիճ թողնելուց հետո, այժմ էլ որոշել կամ հրահանգել է՝ ՊՊԾ աշխատակիցներն ընդդիմադիրներին նաեւ ԱԺ նիստերի դահլիճում հսկեն:

ArmLur.am-ն այսօր նկատեց նաեւ, որ ՊՊԾ աշխատակիցներից ոմանք խորհրդարան քաղաքացիական հագուստով են եկել: Նման բան նույնպես նախկինում չի եղել. անվտանգության աշխատակիցները կամ զինվորական հատուկ համազգեստով, կամ կոստյումով են եղել:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

ՌՈՒՍԱՀՊԱՏԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն օր օրի ավելի ու ավելի է ամրապնդում համոզումը, որ Հայաստանում իր իշխանությունից ավելի ռուսահպատակ իշխանություն երբեք չի եղել: Նա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին պարբերաբար հավատարմության «մեսիջներ» է ուղարկում, թե պաշտոնական Մոսկվայի թելադրած գծից միլիմետր անգամ չի հեռանա: Ապացույցը երեկ՝ նոյեմբերի 16-ին, խորհրդարանում արված այն հայտարարությունն էր, թե իր կաբինետը վաղուց՝ դեռևս 2021-ի հունվարին է ընդունել, այսպես ասած, «խաղաղության պայմանագրի» մասով ռուսաստանյան առաջարկները:

Ավելին՝ փորձելով կռիվ գցել ընդդիմադիր խմբակցության լիդերների ու ՌԴ նախագահի միջև՝ հարց էր բարձրացնում, թե ընդդիմադիրներն ինչ կարծիքի են այդ առաջարկների մասով ու արդյոք դեմ չեն դրանք:

Փաշինյանի նման գործելաոճն ու նման բնույթի ելույթներն իհարկե նոր բան չեն, նորություն է սակայն այն, որ նրա թիմի անգամ ամենաընդգծված «արեւմտամետները», կամ ժամանակին ամենատարբեր դրամաշնորհներ ստացածները, ըստ երեսույթին, իրենց քաղաքական առաջնորդի հրահանգով՝ այժմ Ռուսաստանի մասին խիստ լոյալ, առավել հաճախ՝ դրական են արտահայտվում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԶՊ-ական պատգամավորներից ոմանք անկեղծացան, թե հատկապես Ադրբեյջանի կողմից իրականացված վերջին՝ սեպտեմբերյան սերտեքյան ռազմական էսկալացիայից հետո, երբ սկսել են բարձրաձայնել՝ ուր է մեր անվտանգության երաշխավորը, ներքին հորդոր են ստացել իջեցնել պահանջատիրական տոնն ու խոսույթը, բոլորովին այլ՝ բարեկամական, դաշնակցային հարթություն տեղափոխվել: Այժմ, փաստորեն, իշխանավորները՝ հանձին վարչապետ Փաշինյանի, ՌԴ նախագահին ամենօրյա ռեժիմով հավատարմություն հայտնելու պարտավորություն են ստանձնել:

ՆՇԱՆԱԿՎԵՑ ԶԻՆԴԱՏԱԽԱԶ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ որոշումը կայացված է, եւ զինդատախազ կնշանակվի Գրիգոր Էլիզբարյանը, ով այս պահին ժամանակավոր կատարում է զինդատախազի պարտականությունները:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ որոշումը կլինի առաջիկայում: Նշենք, որ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը նոյեմբերի 1-ին հրաման է ստորագրել, որով զինվորական դատախազի տեղակալ է նշանակել Գրիգոր Էլիզբարյանին՝ ազատելով Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի պաշտոնից:

Նույն հրամանով Էլիզբարյանը հանվել է դատախազների ծառայողական առաջնադասման ցուցակից: Մեկ այլ հրամանով զինվորական դատախազի պարտականությունները նոյեմբերի 2-ից դրվել են Էլիզբարյանի վրա:

«Վարչապետ Նիկոլ Փաշինյանն Աժ-կառավարության հարցուղյախառնի ժամանակ անդրադարձել է ԼՂ խնդրում իշխանությունների դիրքորոշման վերաբերյալ ընդդիմության քննադատություններին:»

Ըստ Նիկոլ Փաշինյանի՝ այդ քննադատություններն անհասկանալի են: Նա հիշատակեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ «Վալդայ» քննարկումների ակումբում ելույթը, որտեղ անդրադարձել էր ԼՂ խնդրին: Ըստ Փաշինյանի՝ առնվազն Հայաստանի քաղաքական դաշտում այդ մոտեցումների առումով համարյա կոնսենսուսային վիճակ է:

Փաշինյանը հիշեցրել է. «ՌԴ առաջարկի էությունը հետեյալն էր՝ ԼՂ կարգավիճակի հարցն անորոշ ժամանակով հետաձգել: Երբ ռուսական առաջարկների վերաբերյալ հարցադրումն արվեց, կառավարությունը շատ արագ արձագանքեց: Բայց եւ ընդդիմության դաշտում, եւ ԼՂ-ում եղան դրսեւորումներ, հայտարարություններ՝ կառավարությունից պահանջելով ընդունել ռուսական առաջարկները: Ես հիմա կարող եմ ասել, որ կառավարությունը շատ վաղուց՝ դեռ 2021թ. հունվարից, այդ պայմանավորվածությունն ընդունել է: Դրա մասին չի խոսել զուտ կոռեկտությունից ելնելով, եւ ես շնորհակալ եմ ՌԴ նախագահին, որ թեման, այնուամենայնիվ, պարզաբանելու հնարավորություն մեզ համար ընձեռեց»: Փաշինյանը նշեց, որ իրենց այսօրվա դիրքորոշումն այն է, ինչ պահանջում էր ընդդիմությունը՝ չհիմնադրել, որ այդ դիրքորոշումը վաղուց են ընդունել: «Եթե ընդդիմությունը հիմա այլ կարծիքի է, համարում է, որ ՀՀ-ն պետք է մերժի ՌԴ առաջարկները, ճիշտ կլինի՝ այդ մասին բարձրաձայն հայտարարել»:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է տարածաշրջանում անվտանգային միջավայրին: Նրա խոսքով՝ հայտարարությունների մակարդակում տեսնում ենք որոշակի լարվածություն:

Միաժամանակ Փաշինյանը ներկայացրել է, թե ինչպիսին է խաղաղության պայմանագրի բանակցությունների ընթացքը. «Դուք գիտեք, որ Հայաստանի Հանրապետությունը



տությունը Վաշինգտոնում արդրեջանական կողմին է փոխանցել մեր մեկնաբանությունները, խաղաղության պայմանագրին վերաբերվող մեր տեքստը, եւ սպասում ենք Ադրբեյջանի արձագանքներին: Այդ արձագանքների առումով պետք է ասեմ, որ այնուամենայնիվ, տեսնում ենք լարվածության որոշակի միտումներ, եւ այդ լարվածությունը կապված է կոնկրետ իրադարձությունների ու իրավիճակների հետ: Դուք գիտեք, որ ՀՀ դիրքորոշումը հստակ է, որ Ադրբեյջանի գործերը պետք է դուրս գան ՀՀ օկուպացված տարածքներից 2021թ. մայիսի 11-ից առաջ գոյություն ունեցած դիրքեր: Ըստ էության՝ միջազգային հանրությունն աջակցում է այս դիրքորոշմանը: Ես հույս ունեմ, որ ՀԱՊԿ-ը նույնպես մեր այս դիրքորոշումը կաջատակարարի»:

Փաշինյանը մանրամասնել է, որ Հայաստանը չի ուզում ՀԱՊԿ-Ադրբեյջան պատերազմի հրահրել: «Մենք ասում ենք, որ քաղաքական դիրքորոշումը, արձանագրումը, թե ինչ է ՀԱՊԿ-ի ընկալումն այս իրավիճակին, եւ ինչ քաղաքական դիրքորոշում է ՀԱՊԿ-ն արձանագրում այս իրավիճակի հետ կապված: Եվ ես կարծում եմ, որ ՀՀ քաղաքացիների վերաբերմունքը ՀԱՊԿ-ի նկատմամբ եւ մեր հարաբերությունների ապագայի նկատմամբ,

ծեւավորվելու է հենց այս հարցի հետ կապված»:

Նիկոլ Փաշինյանը որոշ մանրամասներ է ներկայացրել նաեւ Ադրբեյջանի դիրքորոշումից. «Ադրբեյջանն ունի այսպիսի դիրքորոշում, որ 2021թ. մայիսից առաջ էլ կան տարածքներ, որոնք Հայաստանն օկուպացրել է, եւ իրենք կարծում են, որ Հայաստանն էլ իր հերթին պետք է դուրս գա այդ տարածքներից: Այս կապակցությամբ նախկինում հրապարակային չեմ խոսել, բայց ես ուզում եմ հիմա ասել մեր դիրքորոշումը՝ մենք ասում ենք շատ լավ, եթե ասում եք՝ ինչ-որ տարածքներից ՀՀ-ն պետք է դուրս գա, ի՞նչ սահմանով պետք է դուրս գա, որտեղից ուր պետք է գնա: Եթե մենք հասկանանք, ճշգրտենք սահմանը, դա կարող է Հայաստանի Հանրապետության համար լինել ընդունելի խոսակցություն»:

Նա նշել է, որ Հայաստանը պատրաստ է գնալ լուծումների, որ սահմանի ողջ երկայնքով չլինեն ոչ ադրբեյջանական, ոչ հայկական օկուպացված տարածքներ, սակայն մինչ այդ, պետք է ցույց տալ դրա իրավական հիմքը. «Ես պատրաստ եմ այդ պատասխանատվությունը վերցնել ինձ վրա: Եվ ուզում եմ եւ հայ հանրությունը, եւ միջազգային հանրությունը սա արձանագրի»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՎԵՐՈՎ

Հնդկաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Ամիտ Շահիի հրավերով նոյեմբերի 18-19-ը ՀՀ ԱԿ քարտուղար Արմեն Գրիգորյանը կմեկնի Նյու Դելի՝ մասնակցելու «Ոչ մի գումար ահաբեկչությանը» կոնֆերանսին:

ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակից հայտնեցին՝ այցի շրջանակներում քարտուղարն ունենալու է աշխատանքային հանդիպումներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը նոյեմբերի 16-ին հանդիպել է Ծվեյցարիայի Համադաշնության նախկին նախագահ Միշելին Կալմի-Ռեյխի հետ:

Ջրուցակիցները մտքեր են փոխանակել միջազգային օրակարգի եւ Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Այս համատեքստում ԱԿ քարտուղարը տիկին Կալմի-Ռեյխի խնդրանքով անդրադարձել է Հայաստանի

ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեյջանի ագրեսիային եւ դրա հետեւանքներին: Քարտուղարը կարեւորել է միջազգային գործընկերների հետ դիմադիմացաբար հարաբերությունները:

Կողմերը քննարկել են Ուկրաինայում շարունակվող պատերազմի ազդեցությունը Կովկասի անվտանգային միջավայրի վրա: Արմեն Գրիգորյանն անդրադարձել է տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման, հայ-ադրբեյջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցային ընթացքին:

Ծաղկեպսակ կղզի Անհայտ զինվորի գերեզմանին եւ Հայոց ցեղասպանության հուշահամալիրում, կհանդիպի ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին, Գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանին եւ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանին՝ քննարկելու հայ-ամերիկյան անվտանգային հարաբերություններն ու տարածաշրջանային անվտանգության հարցերը: Գնեթալ-մայրո Լասիկան կմասնակցի խաղաղապահ ուժերի «Զար» ուսումնական կենտրոնի նոր զորանցների, ճաշարանի եւ գիտա-ժողովների սրահի բացման արարողություններին:

ԺԱՄԱՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՆ Եվրոպական հրամանատարության ռազմավարության, պլանավորման եւ քաղաքականության հարցերով տնօրեն գեներալ-մայոր Դանիել Լասիկան ժամանել է Հայաստան: Այս մասին հայտնեցին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից:

Նոյեմբերի 16-17-ին նախատեսվող այցի ընթացքում գեներալ-մայոր Լասիկան

ԿՄԵԿՆԻ ԹՈՒՆԻՍ

Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի 43-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու նպատակով նոյեմբերի 16-ից ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը կմեկնի Թունիս:

ՀՀ Արտաքին գործերի նախարարությունից հայտնում են, որ այցի շրջանակներում նախատեսվում են նաեւ երկկողմ հանդիպումներ գործընկերների հետ:

ՊԱՇՏՈՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ Է

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԻՒՄ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է Ազգային անվտանգության ծառայության ֆինչական դեղատանի ֆինվոլոգ ֆրեական վարույթը, որի ընթացքում դարգվել է, որ 2002-2010 թվականների ընթացքում Երևան քաղաքի «Կենտրոն» քաղաքի համայնքի ղեկավարի, այնուհետև՝ Երևանի քաղաքապետի տեղակալի Գ.Բ.-ն, ղապսոնեական դիրքն օգտագործել է ծառայության աստիճանի հակառակ, ինչպես նաև՝ ղապսոնեական դիրքի օգտագործմամբ, յուրացման եղանակով հափեսակել է առանձնադրես խոսքի շարժերի՝ Երևան քաղաքում եւ այլ բնակավայրերում գտնվող բազմաթիվ անձանց գույքեր:



Պարոնյան փողոց 15 շենք, անշարժ գույք՝ 37
Խորենացի փողոց 43 շենք, անշարժ գույք՝ 96
Թումանյան փողոց 5Ա շենք, անշարժ գույք՝ 45
Տերյան փողոց 1 շենք, անշարժ գույք՝ 37
Արմենակյան փողոց 153 (հողամաս)
Սարյան փողոց 36/4 (հողամաս)
Էջմիածնի հին խճուղի՝ փողոց 28 (հողամաս):
Այնուհետև՝ նշված պաշտոնատար անձը, ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված գույքի ձեռքբերումն օրինական գործունեության ներքո լեգիտիմացնելու, գույքի իրական պատկանելիությունը թաքցնելու եւ հանցավոր ծագման աղբյուրը խեղաթյուրելու, հանցավոր հետքերը վերացնելու նպատակով, օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ մի շարք անձանց ներգրավմամբ, տարաբնույթ ձեռնարկներ, գործարքներ իրականացնելու ճանապարհով, միջոցներ է ձեռնարկել հափշտակության առարկա հանդիսացող անշարժ գույքերի գերակշիռ մասն օրինականացնելու համար:
Հանցավոր գործունեության արդյունքում հափշտակվել են նաև մի շարք նախադարձական ուսումնական հաստատությունների (մանկապարտեզների) հատկացված շենք-շինությունները, ինչի հետևանքով դադարեցվել է նախադարձական ուսումնական հաստատության գործունեությունը, խախտվել են նախակրթական հաստատությունում սովորող մի

քանի տասնյակ երեխաների իրավունքներն ու օրինական շահերը:
Քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համակցությունը բավարար համարելով՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը սեփական նախաձեռնությամբ 2022 թվականի նոյեմբերի 15-ին որոշում է կայացրել Գ.Բ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ 27 դեպքով՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի (Յուրացնել կամ վատնել) 3-րդ մասի 1-ին կետով, 25 դեպքով՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի (Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողոցի վաճառում)) 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով եւ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի (Պաշտոնական լիազորությունները չարաշահելը) 2-րդ մասով (պաշտոնական դիրքն օգտագործելով առանձնապես խոշոր չափերով գույքի յուրացում, պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը, որն անգործությանը առաջացրել է ծանր հետեւանքներ, հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացում):
Նույն օրը որոշումն ուղարկվել է ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչին՝ Գ.Բ.-ին մեղադրանք ներկայացնելու համար:
Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ կոռուպցիոն սխեմայում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու, նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու, պետության եւ համայնքի օրինական շահերը եւ խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:
Միաժամանակ Գլխավոր դատախազությունը, պետական շահերի պաշտպանության՝ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացմամբ, կձեռնարկի դատախազական ներգործության անհրաժեշտ բոլոր միջոցները՝ պետությանը պատճառված վնասները վերականգնելու նպատակով:

- Մասնավորապես՝
Երևան քաղաքի Թամանյան 3 հասցում տեղակայված անշարժ գույք եւ դրան կից՝ նկուղային հարկում գտնվող միավոր Մաշտոցի պողոտա 58 շենք, անշարժ գույք՝ 25
Չարենցի փողոց 4 շենք, անշարժ գույք՝ 129
Վարդանանց փողոց 26/1 շենք, անշարժ գույք՝ 35
Մաշտոցի պողոտա 6-րդ շենք, անշարժ գույքեր՝ 88 եւ 89
Վարդանանց փողոց 5Ա շենք, անշարժ գույք՝ 366
Տերյան փողոց 59 շենք, անշարժ գույք՝ 33
Սայաթ-Նովա փողոց 37/1 շենք, անշարժ գույք՝ 50
Թումանյան փողոց 38 շենք, անշարժ գույք՝ 52
Կոռբացու փողոց 1 շենք, անշարժ գույք՝ 121
Իսրայելյան փողոց 39 շենք, անշարժ գույք՝ 1
Պուշկինի փողոց 58 շենք, անշարժ գույքեր՝ 52 եւ 53
Սարյան փողոցի 20/1 շենք, անշարժ գույք՝ 83
Մաշտոցի պողոտա 51 շենք, անշարժ գույք՝ 43
Խորենացի փողոց 47/1 շենք, անշարժ գույք՝ 121
Մաշտոցի պողոտա 40Ա շենք, անշարժ գույք՝ 100
Կորյունի փողոց 5 շենք, անշարժ գույք՝ 83

ՉՈՐՍ ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԿԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ֆինվոլոգ ֆրեական վարույթով հիմնավորվել է, որ Վ. Ա.-ն, զբաղեցնելով ՀՀ ղապսոնեության նախարարության N գործառնախ հրամանատարի ղապսոնը, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով կառավարչական անձանց օգտին գործողություններ կատարելու համար, Վ. Ա.-ի միջոցով ստացել է խոսքի շարժերով կառավարչական:

վերադասին՝ Ս. Չ.-ին ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակելու: Համաձայն նախապես ձեռք բերած պայմանագրերի վաճառության՝ 2022 թ. մարտի 12-ին Ս. Չ.-ն Վ. Ա.-ին է փոխանցել 1.500 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը, ով, իր հերթին, այն փոխանցել է Վ. Ա.-ին: Արդյունքում Ս. Չ.-ն 2022 թ. մարտի 22-ին գեկուցագիր է ներկայացրել Վ. Ա.-ին՝ խնդրելով միջնորդել վերադասին՝ իրեն նշանակել հիշյալ գործառնախ համապատասխան ստորաբաժանման պետի պաշտոնին, որից հետո Վ. Ա.-ն, ստացած կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Ս. Չ.-ի օգտին, միջնորդություն է ներկայացրել իր վերադասին, որից հետո Ս. Չ.-ն նշանակվել է նշված պաշտոնին: Բացի այդ, Վ. Ա.-ն, մտերիմ փոխհարաբերությունների մեջ գտնվելով նույն գործառնախ գումարտակի հրամանատարի տեղակալ-շտաբի պետ Յ. Ա.-ի հետ, եւ նրանից տեղեկանալով, որ գործառնախ համապատասխան գումարտակի հրամանատարը տեղափոխվում է այլ պաշ-

տոնի, առաջարկել է օժանդակել Յ. Ա.-ին՝ հրամանատարի հիշյալ պաշտոնին նշանակվելու համար վերադաս պաշտոնատար անձին կաշառք տալու: Այնուհետև, Վ. Ա.-ն այդ մասին հայտնել է Վ. Ա.-ին, ով ընդունել է 906.520 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց միջնորդել իր վերադասին՝ Յ. Ա.-ին ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակելու: Արդյունքում Վ. Ա.-ն, կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Յ. Ա.-ի օգտին, հաստատել է Յ. Ա.-ի ծառայողական բնութագիրը եւ մայիսի 18-ին ներկայացրել է վերջինիս համապատասխան գումարտակի հրամանատարի պաշտոնին նշանակելու միջնորդագիր, որից հետո Յ. Ա.-ն նշանակվել է հիշյալ պաշտոնում: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել Երեւանի ընդհանուր իրավասության դատարան՝ Վ. Ա.-ի եւ Յ. Ա.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՆԱԿԸ ՋՆՆՈՒՄ ԵՆ

Պեմզաշենում տեղի ունեցած ողբերգական դեպքը շարունակում է հանրության շրջանում դեռուս մի շարք հարցեր առաջ քաշել, թե ինչու գողության համար բնակարան մտած անձինք այդքան դաժան վարվեցին ընտանիքի անդամների հետ:
Նախաքննական մարմինը հայտնել էր, որ ենթադրյալ հանցագործները դասակարգված հարվածներ էին հասցրել ընտանիքի անդամներին: Իսկ որտեղ է դասակարգ, որով կատարվել է սպանությունը. արդյո՞ք այն հայտնաբերվել է իրավապահների կողմից: Մեզ հայտնի դարձավ, որ դասակարգ, որով ենթադրվում է, որ սպանել են մորը եւ երկու երեխաներին, ոստիկանությունը հայտնաբերել է հենց նրանց տանը: Արդյո՞ք հենց այդ դասակարգ են սպանել նրանց. ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ այս պահին դասակարգ տրված է փորձաքննության, եւ փորձաքննությունը ցույց կտա, թե տանը հայտնաբերված դասակարգ են սպանել մորը եւ երեխաներին, թե ոչ:
Նշենք, որ նոյեմբերի 9-ին արտակարգ ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի՝ Պեմզաշեն գյուղի տներից մեկում: Տան բնակիչները չէին արձագանքել դռան թակոցներին, իրավապահների ներկայությամբ դուռը բացելուց հետո հատակին 3 դի էր հայտնաբերվել՝ տան բնակիչներ Ջարինե Մելիքսեյանը, նրա դուստր Կարինե Մելիքսեյանը եւ նրա 8-ամյա որդին: Մի քանի օր շարունակ իրավապահները չէին կարողանում բացահայտել, թե ովքեր են ոճրագործները, որոնք դաժան կերպով սպանել էին տան անդամներին, սակայն նոյեմբերի 12-ին ենթադրյալ հանցագործություն կատարածները հայտնաբերվեցին, եւ նրանցից մեկը՝ Վրույր Բարսեղյանը, հանցանքը խոստովանել է:
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿԱՆ

ԱՎՏՈՎԹԱՐ

Նոյեմբերի 15-ին՝ ժամը 22:04-ին, ահազանգ է ստացվել, որ Արտաշատ-Երեւան ավտոճանապարհի սկզբնամասում «Գոլդ Սթար» ռեստորանային համալիրի մոտակայքում, տեղի է ունեցել ճՏՊ, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:
Պարզվել է, որ Արտաշատ-Երեւան ավտոճանապարհի 3-րդ կմ-ին բախվել են Mercedes-Benz (վարորդ՝ Ե. Ա.) եւ Volvo (վարորդ՝ Լ. Յ.) մակնիշների ավտոմեքենաները:
Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ե. Ա.-ն եւ ուղեւոր Վ. Յ.-ն հոսպիտալացվել են Երեւանի «Էրեբունի» ԲԿ-ում, որտեղ տուժածների առողջական վիճակը գնահատվել է ծանր:
Փրկարարները հոսանքագրվել են ավտոմեքենաները եւ փակել գազի բալոնների փակաները:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 58 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Հարություն Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, լինելով ՀՀ ՊՆ զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, 2022 թ. հուլիսի 12-ից ընդգրկված լինելով մարտական հերթապահություն իրականացնող կազմում, 2022 թ. հուլիսի 14-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, գտնվելով հանգստացող հերթափոխում, օգտվելով համաձայնաբեր զինվորի քնած լինելու հանգամանքից՝ սեքսուալ բնույթի այլ գործողություն է կատարել վերջինիս նկատմամբ, այն է՝ իր սեռական կրքին հագուրդ տալու նպատակով՝ ձեռքով շոյել է համաձայնաբերի հետույքը: Հ. Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել զինվորական հսկողության հանձնելը: Նախնական դատալսումների փուլում Հ. Հարությունյանը ներկայացրել է համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդություն՝ հայտնելով, որ համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, միջնորդությունը ներկայացրել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է իր պաշտպանի հետ, գիտակցում է դրա հետեւանքները: Պաշտպան Ս. Թամազյանը չի առարկել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության դեմ: Հանրային մեղադրող է. Վերմիշյանը նույնպես չի առարկել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության դեմ, միաժամանակ դիրքորոշում է հայտնել, որ առանց տուժողի ներկայության հնարավոր է շարունակել դատալսումները, քանի որ նախ՝ սույն քրեական գործով պատճառված զույքային վնաս առկա է, բացի այդ էլ՝ ինքը կապ է հաստատել տուժողի հետ, եւ վերջինս Նշել է, որ չի առարկում համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ եւ Հ. Հարությունյանի նկատմամբ որեւէ բողոք եւ պահանջ չունի: Տուժողը մինչև դատալսումներ սկսելը կապ է հաստատել դատարանի աշխատակազմի հետ ու հայտնել, որ ՀՀ սահմաններին տիրող իրավիճակով պայմանավորված չի կարող ներկայանալ դատարան, սակայն չի առարկում համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ, Հ.Հարությունյանի նկատմամբ որեւէ բողոք եւ պահանջ չունի: 2022թ. սեպտեմբերի 27-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մարտիրոսյանը վճռել է Հ. Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված արարքում, եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով, պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 տարի ժամկետով, Հ. Հարությունյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել այն զորամասի հրամանատարությանը, որտեղ կշարունակի ծառայությունը, իսկ զորացրվելուց հետո՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը՝ ըստ բնակության վայրի:

ՈՍԿԱՆ ՄԱՐԳԱՅԱՆ
Տավուշ

ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՐՑԱԽՈՒՄ

ԱՊՐԵՉԱՆՑԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԱՅԳԻՆԵՐ

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռօրյակ հայաստանյան ստրագումից հետո ադրբեջանական կողմը դիմել է Արցախի ժողովրդի իրավունքների խախտումների հանգեցնող հանցավոր գործողությունների, որոնց վերաբերյալ Մարզու իրավունքների դաժանագիտական կազմակերպությանը դարձրել են հանդես է եկել հայաստանյան կողմից:

«Անցած երկու տարվա ընթացքում արձանագրվել են իրադարձարի խախտման, հոգեբանական ահաբեկչության, ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի խաթարման, գյուղատնտեսական աշխատանքների խոչընդոտման, մշակութային արժեքների վանդալիզմի եւ այլ բնույթի հարյուրավոր անօրինական ու միջազգային մարդասիրական իրավունքի խախտման բացահայտ դրսեւորումներ, որոնք հանգեցրել են Արցախի ժողովրդի՝ կյանքի, ֆիզիկական եւ հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, ազատ տեղաշարժի, անձնական եւ ընտանեկան կյանքի, մշակութային եւ կրոնական իրավունքների, արժանապատվության անխախտելիության իրավունքի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, խտրականության արգելքի խախտումների:

- 2020 թվականի նոյեմբերի 10-ից 2022 թվականի նոյեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում Արցախի իրավապահ մարմինների կողմից արձանագրվել է նյութական եւ մարդկային վնասի հանգեցրած հանցագործության 121 դեպք:
- Սպանվել է 18 անձ (3-ը՝ քաղաքացիական, 15-ը՝ զինվորական), սպանության փորձի ենթարկվել է 132 անձ (54-ը՝ քաղաքացիական, 78-ը՝ զինվորական), հրազենային վիրավորում է ստացել եւ ֆիզիկական բռնության ենթարկվել 67 անձ (16-ը՝ քաղաքացիական անձ):
- Պատահականորեն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում հայտնված 8 անձանցից 5-ը վերադարձվել է բռնության, խոշտանգման բացահայտ հետքերով, կտրվածքներով: Հայկական կողմի վերադարձված Նշված անձանցից Մարտունու շրջանի բնակիչ, անասնապահությանը զբաղվող՝ 1989թ. ծնված Արտակ Մանասյանը ընդամենը ամիսներ անց մահացել է:



● Թիրախավորվել է 13 բնակելի տուն, վնասվել կամ ոչնչացվել է 8 գյուղատնտեսական տեխնիկա, 22 տրանսպորտային միջոց, 16 այլ գույք, իրկիզվել է 5 այգի, խաղող բնակչությանից հափշտակվել են մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ: Պատահականորեն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող արտավայրեր անցած կենդանիները չեն վերադարձվում, այլ հափշտակվում եւ օգտագործվում են ադրբեջանական զինված ուժերի ներկայացուցիչների կողմից:

● Բացահայտ խոչընդոտվում են շփման գծի հարեւանությամբ գտնվող տարածքներում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքները: Թիրախային կրակոցներ են արձակվում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացիական անձանց ու գյուղատնտեսական տեխնիկայի ուղղությամբ, որից հետո աշխատանքները դադարեցվում են: Ադրբեջանական կողմի նման հանցավոր գործողությունները ակտիվանում են հատկապես գյուղատնտեսական սեզոնի եւ բերքահավաքի ժամանակ: Ադրբեջանցի զինվորականները երբեմն անմիջապես մտնում են այգիները եւ զենքի գործարքման սպասանակներով բերքահավաքի մասնակցող անձանց ստիպում լքել այն: Նման վարքագծի հետեւանքով սպանվել է Մարտակերտի շրջանի բնակիչ, հողագործությամբ զբաղվող Արամ Տեփնանցը, Մարտունու շրջանի բնակիչ, անասնապահությամբ զբաղվող Սեյրան Սարգսյանը:

● Ճնշում գործարդելու նպատակով պարբերաբար խաթարվում է կենսական նշանակության ենթակառուցվածքների աշխատանքը, որպիսին արձանագրվել է

2022 թվականի մարտին, երբ Ադրբեջանի կողմից գազախողովակի պայթեցման հետեւանքով շուրջ 20 օր Արցախի ողջ բնակչությունը գրկված էր գազամատակարարումից եւ ջեռուցումից: Հատուկ խլացուցիչների միջոցով շարունակվում են խլացվել կապ ու հաղորդակցությունը:

● Ի հեճուկս միջազգային տարբեր կառույցների կոչերի եւ հայտարարությունների՝ իրադարձարի հաստատումից հետո բաց աղբյուրների մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են ադրբեջանական օկուպացիայի տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային արժեքների, գերեզմանների նկատմամբ վանդալիզմի, ոչնչացման եւ արժման հարյուրից ավելի դեպքեր:

● Ադրբեջանում պետական մակարդակով շարունակվում է հայատյացության քաղաքականությունը: Ատելության քաղաքականությունը է Ադրբեջանի նախագահի, իշխող ուժի եւ հանրային ազդեցություն ունեցող անձանց անմիջական մասնակցությամբ: Ադրբեջանական մանկապարտեզներում եւ դպրոցներում շարունակվում է հայերի նկատմամբ ատելության վրա հիմնված, այսպես կոչված, «հայրենասիրական» դաստիարակության մեթոդի կիրառումը:

Այս բոլոր գործողությունները Արցախի էթնիկ գտման եւ Արցախի ժողովրդին ցեղասպանության ենթարկելու ադրբեջանական վարքագծի փաստական ապացույցներն են: Դրանք ավելի խոսում են, քան ադրբեջանական ղեկավարության կեղծ խաղաղասիրությունն ու տրվող սուտ խոստումները,- գրել է ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել ԿԳՄՍ նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերի մասնագիտական խորհրդի հերթական նիստը:

ԿԳՄՍ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ նիստը վարել է խորհրդի նախագահ, երաժշտագետ Հռիփսիմե Պիկիջյանը: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում գրանցման ներկայացված առաջարկները:

Առանձին-առանձին անդրադառնալով ներկայացված առաջարկներին՝ խորհրդի անդամները հանդես են եկել դիտողություններով, մասնագիտական առաջարկություններով: Հիմնական դիտողությունները վերաբերել են համայնքների, պետական եւ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկների առանձնահատկություններին եւ կենսունակությանը: Ընդգծվել է արժեքի տարածման եւ կիրառման աշխարհագրությունը եւ բնութագիրը հստակեցնելու պահանջը:

Խորհուրդը քննարկել է նաեւ առաջարկների կազմման, լրացման կարգի մասին հասարակության իրազեկման անհրաժեշտությանն ու աջակցությանը վերաբերող հարցեր:

Այդ նպատակով առաջարկվել է կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ՝ ներգրավելով նաեւ մարզե-

րի մշակութային ոլորտի համակարգողներին:

Ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում գրանցման ներկայացված առաջարկները քննարկելիս մասնագիտական խորհուրդն ընդգծել է դրանց պահպանությանն ուղղված քաղաքականության մշակման կարեւորությունը:

Ամփոփելով նիստը՝ խորհուրդը որոշել է ներկայացված առաջարկների մի մասը մասնագիտական դիտարկումների համաձայն ուղարկել լրամշակման եւ դիտարկել համայնքներից, խմբերից, անհատներից, ինչպես նաեւ մշակութային, կրթական եւ հասարակական կազմակերպություններից Նոր առաջարկների ստացման հնարավորությունը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 20 ՃՏՊ. 30 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԱՐԵԱՎ

Google Pay-ի ներդրման կապակցությամբ «Կոնվերս բանկը» հայտարարում է խրախուսման արշավ՝ իր Visa քարտայանների համար: Visa միջազգային վճարահաշվարկային համակարգի հետ գործակցությամբ իրականացվող արշավի շրջանակում Google Pay վճարային համակարգով նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը ներառյալ՝ վճարումներ կատարած առաջին 1000 ՀՀ քաղաքացիները քարտայանները կստանան cashback: Բանկի Visa քարտայան չհանդիսացող անձինք այն կարող են պատվիրել առցանց, ներբեռնել մոբայլ հավելվածը եւ մասնակցել ոչ միայն այս, այլև հետագա արշավներին:

««Կոնվերս բանկը» Հայաստանի բանկային համակարգում առաջիններից է սկսել հաճախորդների խրախուսման ծրագրերի իրականացումը՝ հաճախորդներին արժեքավոր նվերներ ստանալու, գնումներից կուտակված միավորները նվերներով փոխանակելու, ինչպես նաև գումարի վերադարձի հնարավորություն ընձեռնելով: 2018-2022թթ. անցած ժամանակահատվածում մասնավորապես՝ անկանխիկ գումարների խրախուսման արշավների շրջանակում մեր ակտիվ հաճախորդները ստացել են Եվրոպական ու Ասիական երկրներում հանգստի, ինչպես նաև՝ Փարիզի «Դիսնեյլենդ» այցելելու հնարավորություն, իսկ cashback արշավների շրջանակում նրանք ստացել են 51,698,600 ՀՀ դրամ ընդհանուր գումար՝ ներառյալ հարկերը»,-ասել են բանկում:

Նշվել է նաև, որ մինչև տարեվերջ «Կոնվերս բանկը» հանդես կգա խրախուսման հետաքրքիր նոր արշավներով: Հեռախոսահամար՝ 010-511-211: Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՎՃԱՐՈՒՄԸ ՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող մայրերը հայտնվել են անհարմար դրության մեջ: արդեն մի քանի օր է, ինչ չեն ստացել իրենց հասանելի 28 հազար 600 դրամը: Ավելին՝ ArmLur.am-ին դիմած մայրերի խոսքերով՝ գումարն իբր փոխանցվելու է հաջորդ շաբաթվա ընթացքում: Մինչդեռ նախորդ ամիսներին այս գումարը նրանք ստացել են յուրաքանչյուր ամսվա մինչև 10-ը: Հարցին պատասխան ստանալու նպատակով ArmLur.am-ը դիմեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, որտեղից մեզ փոխանցեցին հետևյալը. «Համաձայն գործող օրենսդրության (Պետական նպաստների մասին օրենքի 28-րդ հոդված 8-րդ կետ)՝ մինչև 2 տարեկան երեխայի նպաստի վճարման ժամկետը մինչև տվյալ ամսվա ավարտն է: Այս ամսվա վճարումները կկատարվեն նշված ժամկետը չհասխտելով՝ բյուջետային միջոցների անհրաժեշտ վերաբաշխումների կատարումից հետո: Սահմանված է, որ խնամքի նպաստը վճարվի տվյալ ամսվա ընթացքում, օրինակ՝ ամսի 10-ը, ֆինանսված վերջնաժամկետ չէ»: Թե ինչու է որոշվել այդ գումարները բաշխել այս ամսվա ավարտին, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանում են՝ նշելով, որ այս ամսվա վճարման օրվա փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ կարիք կա բյուջետային միջոցների վերաբաշխման:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԳՈՒՅՔ՝ ՇԱԽՄԱՏԻ ՏՈՒՆ-ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻՆ

ՀՀ ԿԳՄՄ-ից Armlur.am-ին հայտնեցին, որ Տիգրան Պետրոսյանի անվան Շախմատի Կենտրոնի մարզադպրոցը ՀՀ կառավարության աջակցությամբ ձեռք կբերի էլեկտրոնային 120 ժամացույց եւ 10 համակարգիչ: Այդ նպատակով ՀՀ կառավարության նոյեմբերի 10-ի նիստում 9 մլն 941 հազար դրամ գումար հասկացվեց Շախմատի դպրոցին:



տնային աշխատանքը եւ կազմ ու պատրաստ ներկայանալ մրցումներին»:

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի գործադիր տնօրեն Հրաչյակ Թավադյանի խոսքով՝ նախատեսվում է՝ ձեռք բերվող 10 համակարգիչներից 3-ը լինեն գերիզոլ. «Դրանցով մեր հավաքականների անդամներն ու մարզիչները ուսումնասիրական հավաքներ կանցկացնեն, վերլուծություններ կանեն եւ կնախապատրաստվեն կարելու ստուգատեսներին: Մյուս 7 համակարգիչներով կհամարվեն Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցի դասարանները, որոնցով մարզադպրոցի 16 մարզիչները կկարողանան կազմակերպել 5-7 տարեկան երեխաների ուսումնական գործընթացը: Մինչ այս շախմատի տուն-մարզադպրոցում համակարգիչներ չեն ունեցել, մարզիչներն իրենց անձնական համակարգիչներով էին իրականացնում պարապմունքները»,- նշում է Հրաչյակ Թավադյանը եւ հավելում, որ այս տարի 125 երեխա է ընդունվել Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային ժամացույցներին, Հայաստանի շախմատային ֆեդերացիայի գործադիր տնօրենն ասում է՝ դրանք պետք է հաստատված լինեն Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) կողմից, հակառակ դեպքում ՖԻԴԵ-ն կարող է չճանաչել այն մրցաշարերի արդյունքները, որոնք անցկացվել են իրենց կողմից չհաստատված ժամացույցներով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի փոխանցմամբ՝ ծրագիրն իրականացվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանձնարարականով: «Երբ Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը փառահեղ ելույթ ունեցավ Համաշխարհային օլիմպիադայում եւ գրավեց երկրորդ տեղը, վարչապետն ընդունեց հավաքականին եւ խոստացավ անել ամեն ինչ, որպեսզի արդյունքները շարունակական լինեն: Շուտով Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցը կունենա շախմատի էլեկտրոնային ժամացույցներ եւ համակարգիչներ: Շատ վաղուց էլեկտրոնային ժամացույցներ ձեռք չէին բերվել, իսկ առանց ժամացույցի շախմատ չեն խաղում: Դրա հետ մեկտեղ, ձեռք են բերվելու գերիզոլ համակարգիչներ, որպեսզի մեր շախմատիստները կարողանան իրենց վերլուծությունները հնարավորինս կարճ ժամկետում կատարել: Դրանք շատ կօգնեն, որպեսզի շախմատիստները կարողանան բարձրացնել իրենց գիտելիքների մակարդակը, մարզավիճակը եւ նորանոր հաղթանակներ գրանցեն»,- ասում է Կարեն Գիլոյանը:

Ներկայումս շախմատային վերլուծություններն արվում են հզոր սերվերների միջոցով, որոնք հաշված ռոպյեների կամ ժամերի ընթացքում մոնիտորինգի դիտարկման արդյունքներ եւ ամփոփ տվյալներ են գեներացնում: ԿԳՄՄ նախարարի տեղակալի հավաստմամբ՝ հայ շախմատիստներն այդ ծրագրից օգտվելու հնարավորություն ունեն: «Հայաստանի կառավարությունը հոգացել է, որ այդ բավական թանկ հաճույքից ես մեր ամենաուժեղ շախմատիստներն օգտվեն: Այսպիսով՝ մեր ուժեղագույններն այլևս ժամանակի խնդիր չեն ունենա, կկարողանան ամենակարճ ժամկետներում կատարել իրենց

«Վերջին ժամացույցները՝ շուրջ 30 հատ, ստացել ենք 5-6 տարի առաջ, երբ Հայաստանում անցկացնում էինք Եվրոպայի առաջնությունը: Հավաքածուի մեջ նաև օնլայն տախտակներ եւ 100 հատ շախմատ էր ներառված»,- պատմում է Թավադյանը:

Նրա գնահատմամբ՝ այս տարվա ընթացքում պատանի, երիտասարդ եւ մեծահասակ շախմատիստները գոհացնող արդյունքներ են գրանցել. «Տղամարդկանց մեծահասակների հավաքականը Համաշխարհային օլիմպիադայում այս տարի հավասար միավորներով զբաղեցրեց երկրորդ տեղը, Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնությունում Գաբրիել Սարգսյանը կիսեց 1-2-րդ հորիզոնականները, մեր մարզադպրոցի սանը՝ Մարիամ Մկրտչյանը, դարձավ աշխարհի ու Եվրոպայի Մ-18 տարեկանների չեմպիոն, մյուս սանն էլ երրորդ տեղը գրավեց: Կարծում եմ՝ այս տարվա արդյունքներն իսկապես գոհացնող են, բայց, անկասկած, նոր համակարգիչների ու էլեկտրոնային ժամացույցների ձեռքբերման ծրագիրը կարելու նախաձեռնություն է ու անպայմանորեն նպաստելու է էլ ավելի բարձր արդյունքներ գրանցելուն»:

ԿԳՄՄ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի գնահատմամբ՝ սպորտի ոլորտում ՀՀ կառավարության կատարած ներդրումները միանգամայն արդարացիված են եւ պետք է շարունակական լինեն. «Երբ գումար է տրամադրվում եւ կա արդյունք, մոտեցումն անպայման պետք է շարունակական լինի, որպեսզի արդյունքներն ավելանան: Հայաստանի կառավարությունն այսօր իր վրա է վերցրել սպորտային ծախսերի գրեթե ամբողջ մասը: Ինչպես տեսնում եք, արդյունքները տեսանելի են: Իհարկե, կան հատուկներ մարդիկ, կազմակերպություններ, որոնք սիրում են սպորտն ու հովանավորում, աջակցում են հայկական սպորտին, որը շատ շնորհակալ եւ կարեւոր գործ է: Ես անչափ շնորհակալ եմ նման մարդկանց, բայց դա տարերային եւ ոչ համակարգված բնույթ ունեցող գործընթաց է: Ոլորտի հիմնական խնդիրների նկատմամբ ամենակարեւորը պետական հոգածությունն է, որը կա»,- եզրափակում է Կարեն Գիլոյանը:

Ն.Գ.

ՎՃԱՐՈՒՄԸ ԲԱՑԱՌԱՊԵՏ ԲԱՆԿՈՎ

2023 թվականի փետրվարի 1-ից կենսաթոշակներն ու նպաստները (ծերության, հաճախորդականության, կենսկրոնիկ կորցնելու դեղում) նախատեսվում է վճարել անկանխիկ եղանակով բացառադես բանկերի միջոցով. «Պետական նպաստների մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում փոփոխություններ նախատեսող նախագծերն այսօր առաջին ընթերցմամբ ընդունվել են Ազգային ժողովի կողմից:

Ներկայումս վերոնշյալ վճարներն անկանխիկ եղանակով տրամադրվում են ինչպես բանկերի, այնպես էլ ՀՀ փոստային կապի ազգային օպերատորի միջոցով: Սակայն անկանխիկ վճարումների վերաբերյալ օրենսդրությամբ՝ Ազգային օպերատորը 2023 թվականի փետրվարի 1-ից չի կարող կենսաթոշակներն (նպաստները) անկանխիկ եղանակով վճարել ներկայիս կարգով:

Ըստ այդմ, Ազգային օպերատորի միջոցով կենսաթոշակն (նպաստը) անկանխիկ եղանակով ստացող քաղաքացիները կարող են դիմել Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) ցանկացած տարածքային բաժնի՝ կենսաթոշակի (նպաստի) վճարումը նախընտրած բանկի միջոցով շարունակելու համար: Աշխատող քաղաքացիները կարող են դիմել նաև առցանց՝ www.socservice.am կայքէջի միջոցով, եթե դիմելու օրվա դրությամբ՝ կենսաթոշակի վճարումը դադարեցված չէ:

Մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը չդիմելու (Ազգային օպերատորի փոխարեն բանկ չընտրելու) դեպքում փետրվար ամսվա կենսաթոշակի (նպաստի) վճարումն անկանխիկ եղանակով իրականացնելու համար համակարգն ինքնաշխատ եղանակով (պատահականության սկզբունքով) քաղաքացու փոխարեն կընտրի որևէ բանկ: Հիշեցնենք, որ քաղաքացին ցանկացած ժամանակ կարող է դիմել (աշխատող քաղաքացին՝ նաև առցանց)

կենսաթոշակի կամ նպաստի ստացման եղանակը կամ բանկը փոխելու համար:

Միեւնույն ժամանակ կշարունակվեն գործել կենսաթոշակը (նպաստը) կանխիկ եղանակով վճարելու՝ օրենքով սահմանված բացառություններն, այն է՝ քաղաքացու ընտրությամբ (դիմումի հիման վրա)՝ կենսաթոշակը (նպաստը) կարող է կանխիկ կամ անկանխիկ եղանակով տրամադրվել, եթե վերջինս առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ 75 տարին լրացած անձ է:

Ուստի, եթե քաղաքացին ցանկանում է փոխել պատահականության սկզբունքով ընտրված բանկը, կամ քաղաքացին առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ 75 տարին լրացած անձ է եւ կենսաթոշակը (նպաստը) ցանկանում է ստանալ կանխիկ եղանակով՝ Հայփոստի միջոցով, ապա նա կարող է դիմել ՄՍԾ տարածքային բաժնի (աշխատող քաղաքացին կարող է դիմել նաև առցանց):

«ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՎԵՐՈՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՅ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ վերոնտրվեց Հակոբ Ղազանջյանը:

Նախագահն ընտրվեց միության 17-րդ համագումարի ընթացքում, որը տեղի ունեցավ Նոյեմբերի 14-ին Երեւանի պետական կամերային թատրոնում:

Հակոբ Ղազանջյանն ընտրվեց բաց քվեարկությամբ:

Ղազանջյանի խոսքով՝ ավելի ճկուն կառավարման համար ցանկալի է միության քարտուղարություն ստեղծել, որում կընդգրկվեն երիտասարդներ, որոնք ուզում են աշխատել, որոնք կհամակարգեն հստակ ոլորտներ, անընդհատ կապի մեջ կլինեն իրենց բնագավառի ներկայացուցիչների հետ եւ ժողովներ, միջոցառումներ կկազմակերպեն: «Եթե սցենարաֆիլիայի բնագավառն է, ցուցահանդեսներ կկազմակերպեն, եթե թատերագիտության, դրամատուրգիայի ոլորտն է, ընթերցումներ, քննարկումներ եւ այլն: Դա հիմնականում արվում է, որ միությունն ուղիղ աշխատի միության անդամի հետ, ոչ թե թատրոնների միջոցով: Եթե այդ կանոնադրությունն ընդունվի, հաջորդ համագումարին պատվիրակներ կընտրվեն կոնկրետ սեկցիաների ժողովներում, ոչ թե թատրոններում: Ես դա կարելու եմ համարում», - շեշտեց Ղազանջյանն ու հավելեց՝ իր առաջարկով վարչությունն իրավասու է լինելու ընդունելու նախագահի հրաժարականը եւ ընտրելու նոր նախագահ մինչեւ հաջորդ համագումարը: Այդ դեպքում միության նախագահը, ըստ էության, կկոչվի վարչության նախագահ:

Թատերական գործիչների միությունն այս պահին ունի մոտ 620 անդամ: Վերջին տարիներին միության անդամների շարքերը համալրել են երիտասարդները: Այժմ եւս դիմումները շատ են:

«Տխուր է, բայց այն սերունդը, որի յուրաքանչյուր անդամ միության հենասյուն էր, եւ որը միության աշխատանքներին լծվում էր՝ անելով իրենցից կախված ամեն բան, օր օրի պակասում է: Առաջիկա տարիներին գլխավոր ռազմավարական խնդիրը պետք է լինի սերնդափոխությունը: Մենք պետք է գտնենք երիտասարդների, պետք է նրանց ուղղորդենք, որ աշխատեն, սիրեն իրենց գործը: Երիտասարդները պետք է ուժ ունենան ընտրելու



իրենց առաջնորդներին, որոնցից հետագայում, գուցե, ընտրվի միության նախագահը: Եթե այդ տարիքում սկսեն ամբիջաների բախումներ, անցանկալի ընթացք կլինի», - հավաստիացրեց Հակոբ Ղազանջյանը:

Խոսելով թատերական ոլորտի խնդիրների մասին՝ Ղազանջյանն ասաց՝ առաջ իրենց ձայնը տեղ հասնում էր, իսկ հիմա տպավորություն է՝ մի քանիսի պաշտոնական կարծիքը բավարար է խնդիր լուծելու համար: «Կցանկանալի՝ միություններն ավելի ներգրավված լինեին մշակութային քաղաքականությունը ձեւավորելու հար-

ցում, եւ ինձ համար մինչ օրս անհասկանալի է, որ շուրջ 15 տարի խոսում ենք թատրոնի մասին, օրենքի մասին, որը դեռ չկա: Միությունը պետք է հետևողական լինի եւ առաջարկներ անի: Չգիտեմ՝ կընդունվի, թե ոչ, բայց պետք է այդ հարցում ակտիվ լինել, քանի որ օրենքի բացակայությունը անընդհատ խնդիրներ է ստեղծում թատերական դաշտում», - շեշտեց Հակոբ Ղազանջյանը:

Թատերական գործիչների միության նախագահի միակ թեկնածուն Հակոբ Ղազանջյանն էր:

ԼՈՒՐԵՐ

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է

68 տարեկան հասակում կյանքից հեռացել է Արտաշատի Ամո Խարազյանի անվան Դրամատիկական թատրոնի դերասան, ՀՀ վաստակավոր արտիստ Բագրատ Գեորգյանը: ՀՀ վաստակավոր արտիստի հոգեհանգիստը տեղի կունենա Նոյեմբերի 18-ին՝ ժամը 18.00-ին, Կոնդի Սուրբ Յովհաննես եկեղեցում, իսկ վերջին հրաժեշտի արարողությունը տեղի կունենա Նույն օրը՝ Արտաշատի Ամո Խարազյանի անվան Դրամատիկական թատրոնում, ժամը 14.00-ին:

ԱՄԵՆԱԳԻՏՎԱԾ ՀՈՒՈՎԱԿ

«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի հեղինակավոր մրցույթում Հայաստանի պատվիրակ Նարեհ Dance! երգի հոլովակն այս պահին մրցույթի YouTube-ի պաշտոնական ալիքում ամենադիտվածն է: Այն 406 հազար դիտում ունի: Dance! մրցույթային երգի երաժշտությունը գրել են Գրիգոր Կյուկչյանը եւ Նիկ Էգիբյանը, խոսքերի հեղինակը Գրիգոր Կյուկչյանն է: Տեսահոլովակի ռեժիսորն է Արամայիս Հայրապետյանը: Հիշեցնենք, որ «Մանկական Եվրատեսիլ 2021»-ում Մալենայի հաղթանակի շնորհիվ՝ մրցույթը 2022-ին կանցկացվի Հայաստանում: Այն տեղի կունենա դեկտեմբերի 11-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Հայաստանը կիրառվելու է 16 երկրի մասնակցի: Այդ երկրներն են՝ Ալբանիան, Իռլանդիան, Իտալիան, Իսպանիան, Լեհաստանը, Յուսիսային Մակեդոնիան, Ղազախստանը, Մալթան, Նիդերլանդները, Պորտուգալիան, Սերբիան, Ուկրաինան, Միացյալ Թագավորությունը, Վրաստանը, Ֆրանսիան: Միացյալ Թագավորությունը, որը Ուկրաինայի փոխարեն հյուրընկալելու է, «Եվրատեսիլ 2023» երգի մրցույթը, 2005 թվականից ի վեր առաջին անգամ կմասնակցի մրցույթին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Երեւանի կարճամետրաժ եւ ուսանողական ֆիլմերի միջազգային կինոփառատոնի նպատակն է նպաստել նոր կինոսերնդի ձեւավորմանը, օժանդակել երիտասարդ ստեղծագործողներին գտնել իրենց տեղը ժամանակակից կինոյում, ամրապնդել կապը Հայաստանի եւ օտարերկրյա կինոգործիչների միջեւ, խթանել փորձի փոխանակմանը: Հինգերորդ կինոփառատոնը կանցկացվի Նոյեմբերի 18-20-ը Կոտայքի մարզում: Հայաստանի ազգային կինոկենտրոնը հայտնում է, որ փառատոնը բաղկացած է միջազգային եւ ազգային խաղարկային ֆիլմերի մրցույթային ծրագրերից: Մրցանակներ կշնորհվեն 11 անվանակարգերում: Փառատոնի ցուցադրությունները տեղի կունենան Հրազդան, Ծաղկաձոր, Արմավյան քաղաքներում: Հանդիսատեսը հնարավորություն կունենա դիտելու միջազգային հեղինակավոր կինոփառատոնների մրցանակակիր կարճամետրաժ կինոնկարները: Փառատոնի կազմկոմիտեն այս տարի ստացել է ավելի քան 500 հայտ աշխարհի 68 երկրից: Մրցույթային ծրագրում ընդգրկվել է 33 ֆիլմ 10 երկրից, որից 18-ը՝ ազգային ծրագրում, իսկ 15-ը՝ միջազգային ծրագրում:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ

ՀԱՅԿՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

Նոյեմբերի 16-ին ԱՄՆ-ի հայաստանու Աննա Մեջլիս ֆաղաֆում կկայանա ՀՀ վաստակավոր արժիստ, սիրո հավերժ երգիչ Հայկոյի հիշատակին նվիրված մեծ համերգ, որին ներկա կզգնվեն երգչի հարազատ ընկերներն ու մտերիմները:

Համերգի նախապատրաստական աշխատանքներից լուսանկարներ է հրապարակել դերասան, հումորիստ Արմեն Պետրոսյանը՝ Մենջը, Քրիստինե Պեպելյանը, Արմինկան, Արտավազը Ամիրյանը եւ Ռազմիկ Ամյանը:

Ի դեպ, նշենք, որ համերգը կրում է «Սերը սիրուց հետո՝ կարոտով...» խորագիրը, այն տեղի է ունենալու Ալեքս թատրոնում:

ԼԻՂԱ ԵՐԻՍՏՈՐՅԱՆ



● Նոյեմբերի 18-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա թատերական ներկայացում՝ «Դեպի վերջ»: Տոմսերի արժեքը՝ 2000 դրամ: Սկիզբը՝ 19:00:



Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է անցկացվում ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունների հարցը:
Գարեգին Սեդրակյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը, ինչպես նաև բժշկագետների կողմից անցկացվող ստանդարտացված հարցերով խորհրդատվություն անցկացնում են առողջապահական կազմակերպությունները՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում ամուսնացող անձանց ցանկությամբ:

Ամուսնացող անձի հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք: Այդ արդյունքները հետազոտություն անցած անձի համաձայնությամբ կարող են հաղորդվել այն անձին, որի հետ նա մտադիր է ամուսնանալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Եթե ամուսնացած անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնության պետական գրանցման պահին իր մոտ սեռավարակի (ընդ որում մարդու իմունային անբավարարության վիրուսի), ինչպես նաև՝ հոգեկան հիվանդության եւ թմրամոլության, թունամոլության առկայության փաստը, ապա մյուս ամուսինն իրավունք ունի ամուսնությունն անվավեր ճանաչելու համար դիմելու դատարան:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է իրականացվում ընդերքի օգտագործման եւ դահողանության ոլորտում դեռևս կանոնադրված գործունեությունը:
Միսակ Թոխատյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ընդերքի օգտագործման եւ պահպանության ոլորտում պետական նորմավորումը համապատասխան ազգային ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, տեխնիկական պայմանների եւ այլ իրավական ակտերի մշակումն ու ընդունումն է:

Սահմանված կարգով ընդունված ազգային ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը, տեխնիկական պայմանները եւ այլ իրավական ակտերը կանոնակարգում են ընդերքի օգտագործման եւ պահպանության հետ կապված իրավահարաբերությունները բոլոր մասնակիցների համար:
Շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Ընդերքի օգտագործման եւ պահպանության ոլորտի ազգային ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը, տեխնիկական պայմանները եւ այլ իրավական ակտերը մշակվում եւ հաստատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, որ ԱԺ նիստերի դահլիճից հավաքել են 22 եր, բաժակները, քանի որ դահլիճում է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Հիշեցնենք, որ 2021 թվականի օգոստոսի 25-ին ԱԺ-ում միջադեպ էր գրանցվել, երբ պատգամավորները միմյանց վրա շշուկ էին նետել: Կառավարության ծրագրի քննարկումն ընդհատվել էր՝ իջխող եւ ընդդիմադիր պատգամավորների միջև վիճարկության պատճառով:

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից
«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Form with fields for Name, Surname, Address, and Phone Number, enclosed in a dashed box.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն՝ ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 16.11.2022

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: